

ՆԱԻՐԱ ԱՐԱՐԱՏԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ,

Խ. Աբովյանի անվան

ՀՊՄՀ բանասիրական ֆակուլտետի փոխդեկան

Khachatryannaira21@ aspu.am

ORCID ID: 0000-0002-2228-8469

DOI: 10.54503/978-5-8080-1568-5-139

ՍԵՐԳԵՅ ՍԱՐԻՆՅԱՆԻ «ՍԵՐՈՒՆԴՆԵՐ ԵՎ ԱՎԱՆԴՆԵՐ» ԳԻՐՔԸ

Բանալի բառեր՝ դասական, գրականագետ, քննադատական, սերունդ, դիմագիծ, գրական ժառանգություն, հոդված, չհնացող ավանդներ, ազգային գրականություն:

Ներածություն

Հայ գրականագիտական մտքի որոշարկվող արշալույսին՝ 50-ական թվականների կեսերին, «Քննադատական ռեալիզմի սկզբնավորումը հայ գրականության մեջ»¹ աշխատությամբ իր գրական մկրտությունը ստացած Սերգեյ Սարինյանը գրական աշխարհի ուշադրության կիզակետում դիրքավորած իր պատվավոր տեղը պահպանեց ընդմիշտ՝ անգամ երկրային կյանքի ավարտից հետո: Անհատի պաշտամունքի քննադատության տարիներին, երբ խորհրդային երկրում կատարվող արմատական փոփոխությունների արդյունքում գեղարվեստական զարգացումը նոր շրջան թևակոխեց, անհրաժեշտություն դարձավ գրականագիտական մի շարք խնդիրների վերանայումն ու նորոգի արժևորումը:

¹ Սարինյան Ս., *Քննադատական ռեալիզմի սկզբնավորումը հայ գրականության մեջ*, Երևան, Հայկական ՍՍՌ ԳԱԱ հրատ., 1955:

Սարինյանի գործունեության ընթացքն ու կատարված աշխատանքը վկայում են, որ նա, անտեսելով քաղաքական արգելքները, ծրագրային հրահանգները, անձնական ազդակներն ու շահը, ոչ միայն փորձեց կայանալ՝ զինվոր-ուսուցիչ-ուսանողից դառնալով գրականագետ-գիտաշխատող-գիտնական, այլև նոր խոսք ասաց՝ նվաճելով իր հաստատուն տեղը 60-ականների «սուինգոդ»² միջավայրում: Ողջ գործունեության ընթացքում Սարինյանը հավատարիմ է մնացել իր դավանանքին՝ ստեղծելով գրականագիտական նորագյուտ տեսություններ ուսեփական ոճ, որը ոչ մի գրականագետի ոճի հետ չես կարող շփոթել: Ա. Դոլուխանյանը գրում է. «Իր բազմաքանակ աշակերտներով ակադեմիկոս Սերգեյ Սարինյանն ստեղծել է սեփական գրականագիտական դպրոցը»³:

Քիչ է ասել, թե Ս. Սարինյանի գրականագիտական հետաքրքրությունների շրջանակը լայն է, այն նաև տարողունակ է, լեցուն՝ ուսումնասիրությունների բազմաշերտ ու սկզբունքային հիմնավորումներով՝ ընդգրկելով հայ գրականության երկու դարը՝ նոր և նորագույն շրջանները, հայ նոր և նորագույն գրականության պատմության, ժամանակակից գրականության, գրականության տեսության բազմաթիվ հարցեր: Գրականագետի հետաքրքրությունները չեն սահմանափակվում առանձին հեղինակների շրջանակված ստեղծագործությունների արժևորմամբ, այլև քննվում են գրական փորձարկումների գերխիտ միջավայ-

² 1960-ական թվականներ, տասնամյակ, որն ընդգրկում է 1960-1969 թվականները: Հայտնի է նաև որպես մշակութային երևույթ «սուինգոդ վաթսունականներ» կամ պարզապես «վաթսունականներ» անունով: Այս երևույթը հաճախ դիտարկվում է նաև 1950-ականների վերջի և 1970-ականների սկզբի տարիներին: «Սուինգոդ» անգլերենից թարգմանաբար նշանակում է «ճոճվող», «թափ առնող», որն էլ բնութագրում է 60-ականների հեռախար առաջադիմական փոփոխությունները նաև մշակույթում և մասնավորապես գրականության մեջ:

³ Տե՛ս **Գրական թերթ**, <Իշատակի խոսք Սերգեյ Սարինյանին, 16/06/2017:

րում, տարաբնույթ հեղինակների երկերի հետ փոխադարձ աղերսների ու ազդեցությունների համատեքստում:

Սարինյանի գրականագիտության աչքի ընկնող առանձնահատկություններից է շարժումը. այն անընդհատ ընթացքի մեջ է՝ պրպտումների շրջապտույտում երբեմն հանգրվանելով տարբեր գրական միջակայքերում: Չկա գրական մի երևույթ, շրջադարձային մի հեղինակ, մի նշանակալի միջոցառում, որ Սարինյանի տեսադաշտից վրիպած լինի:

«Ի՞նչ է գրականագիտությունը...» հարցի պատասխանը հավաստում է, որ ըստ Սարինյանի՝ այն փիլիսոփայական գիտություն է, ուստի իր գործունեության հիմնական դրույթներից է եղել գրականագիտության մեթոդաբանության հարցի քննությունը⁴:

Սարինյանի՝ 1984-ին տպագրված «Մերունդներ և ավանդներ» գրքի հոդվածներն ու ուսումնասիրությունները հեղինակի՝ 80-ական թթ. սկզբներին ամբողջացված հետազոտությունների արդյունքն են, որում պատմաքննական մեթոդով մեկնաբանվել են նոր և նորագույն գրականության որոշ հարցադրումներ, որոնք ժամանակաշրջանի պատմական փոփոխությունների ընթացքում նորովի լուսաբանությունների, վերագնահատման և արժևորման պահանջ ունեին: Հոդվածի նպատակն է կրկին վերադառնալ այս հարցերի քննությանը՝ ընդգծելու Սարինյանի գրականագիտական հայացքների ու հետաքրքրությունների կապը ժամանակի հետ և որոշակի միջավայրում: Դասական գրականագետը կարողանում էր կողմնորոշվել ու դիրքավորվել գրականության ընթացքին համապատասխան, շոշափել ժամանակի զարկերակն ու արձագանքել դրան: Նա երբեք չէր ուշանում գաղափարների նորացման ընթացքից:

⁴ **Սարինյան Ս.**, *Հայոց գրականության երկու դարը*, հատոր 7, Երևան, «Արմավ» հրատ., 2018, էջ 211–212:

«Սերունդներ և ավանդներ» ժողովածուի որոշ հարցադրումներ

Սարիյանի բեղմնավոր գրականագիտական ժառանգության մեկնության համար եռակի կյանք է անհրաժեշտ, քան դասականն ինքն ապրեց, ուստի փորձել ենք մի համեստ անդրադարձ կատարել նրա «Սերունդներ և ավանդներ» գրքին⁵։ Վերջինիս մեջ ամփոփված հոդվածներն ու ուսումնասիրությունները ոչ միայն վերաբերում են հայ դասական ու ժամանակակից գրական երևույթներին, այլև գրաքննադատական հայեցակետերի յուրովսանն պարզաբանումներ են։ Գիրքը կազմված է երկու բաժնից՝ «Դասականների ավանդը» և «Ժամանակների արձագանքը»՝ հետաքրքիր ենթատեքստեր պարունակող վերտառություններով։

Առաջին մասում, որտեղ զետեղված հոդվածները գրվել են 1978–1982 թ. միջակայքում, որպես անցյալի չինացող ավանդներ ու ազգային գրականության հիմնարկման հենասյուներ, գրականագետն արդյրադարձել է Մ. Նալբանդյանի հրապարախոսությանը, Ռ. Պատկանյանի գրական դավանանքին, Հ. Թումանյանի և հայ ժողովրդի ռուսական կողմնորոշման խիստ արդիական հարցադրումներին, 19-րդ դարի 70–80-ականների քննադատական, գրական շարժմանն ու Ա. Տերտերյանի գրականագիտական ոգորումներին։ Հայագիտության դասական ընտրյալների շարքում իր արժանի տեղն ապահոված Ա. Տերտերյանին Սարիյանը բնութագրում է որպես գիտնականի իսկական տիպար. «Ընդգծված անհատականությամբ և ճշմարիտ տաղանդի յուրահատուկ աշխատասիրությամբ նա ստեղծեց իսկայական ծավալի մի ժառանգություն, ամբողջական համակարգի մեջ դրեց հայոց նոր շրջանի գրականության գիտութ-

⁵ Տե՛ս **Սարիյան Ս.**, *Սերունդներ և ավանդներ*, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1984:

յունը և մշակեց այդ գիտության մեթոդոլոգիական սկզբունքները: Նա կատարելագործեց գրականագիտական մենագրության ժանրը՝ կառուցելով դասական գրողների ստեղծագործության հետազոտության օրինակելի ու ինքնատիպ մոդելներ»⁶: Սարինյանական բնութագրումները բավական արժեքավոր են և պայծառ լույս են սփռում Ա. Տերտեռյանի գրականագիտական հայացքների բացորոշմանը:

Գրքի երկրորդ հատվածի հետաքրքրություններն առավել ծավալուն են ու բավական համարձակ՝ հատկապես գրական նոր սերնդի դիմագիծը ներկայացնելու տեսանկյունը: Քննության են ենթարկվել նաև Պ. Սևակի, Վ. Դավթյանի, Ռ. Դավոյանի, Դ. Դեմիրճյանի որոշ ստեղծագործություններ ու գրական հայացքների համակարգեր, պատմության վիպականացման, արդիականության ու անհատի փոխկապակցման, գրական զարգացումների մի շարք խաղարկային հարցերի սարինյանական անկողմնակալ բնութագրումներ: Գրական երկին գրականագետի անդրադարձն ու առանձնահատուկ արժևորումը պայմանավորված է ժամանակաշրջանի ազդեցություններով. աշխարհայացքի զարգացմանը զուգընթաց այն կարող է կրել փոփոխություններ, որի արդյունքում անհրաժեշտաբար կարող են կրկին ուշադրության կիզակետում հայտնվել այս կամ այն հեղինակի նախկինում ուսումնասիրված կամ լուսանցքում հայտնված ստեղծագործություններ: Այս տրամաբանությամբ առաջնորդվելով՝ նկատում ենք՝ մեկ անգամ չէ, որ Սարինյանի ուշադրության ոլորտում են «Մերունդներ և ավանդներ» գրքում ներկայացված հեղինակների ստեղծագործական հակոտնյա աշխարհները: Տարիքային ազդակները, կյանքի փորձառությունը, որոշակի տրամադրվածությունները, գրության շարժառիթներն ու նպատակը կարող են ձևակերպել միևնույն հեղինակի ստեղ-

⁶ Նույն տեղում, էջ 127:

ծագործությունների վերաբերյալ տարբեր՝ շատ հաճախ միմյանց լրացնող ու զուգահեռվող, բայց երբեմն էլ հակասող տրամադրություններ (օրինակ՝ Պ. Սևակի ստեղծագործությունների սարինյանական մոտեցումները):

Քննության ենթակա գրքում ներկայացվող առաջին հեղինակը Մ. Նալբանդյանն է, որի ստեղծագործություններին Սարինյանը հաճախ է անդրադարձել «Քննադատական ռեալիզմի սկզբնավորումը հայ գրականության մեջ» գրքում, հպանցիկ ներկայացվել է նաև «Հայկական ռոմանտիզմ»⁷ գրքում, «Հայոց գրականության երկու դարը»⁸ գրքի չորրորդ հատորում և այլն: Եթե «Մերոնդներ և ավանդներ» գրքում Նալբանդյանը դիտվում է հայոց երկնականարում հայտնված մի աստղ, ով ավետելու էր ազգի փրկության ուղին, ապա «Հայոց գրականության երկու դար»-ում նա արդեն ազատության առաքյալ է: Այդպես էլ վերնագրվել է հոդվածը՝ կարևորելով արդեն հեղափոխական, դեմոկրատական ուրույն հայացքներով և բացահայտ կոչերով՝ քննադատության ու խոսքի փոխարեն զենքով ու անզարդ քնարով պայքարելու եղանակը: «Դասականների ավանդը» բաժնի առաջին հոդվածը բովանդակում է Նալբանդյանի հրապարակախոսական արվեստը: Սարինյանը համոզված է, որ կառուցվածքով ու ներքին համաչափությամբ գրված Նալբանդյանի՝ «Երկու տող», «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ», «Նկատողություն», «Հեգելը և նորա ժամանակը»⁹ երկերը, ժանրային ձևի և բովանդակության կատարյալ միասնությամբ ստեղծված հրապարակախոսական արվեստի արժեքներ են: Երկը՝ որպես տրամաբանական միավոր դիտարկելով՝ քննութ-

⁷ Տե՛ս **Սարինյան Ս.**, *Հայկական ռոմանտիզմ*, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1966:

⁸ Տե՛ս **Սարինյան Ս.**, *Հայոց գրականության երկու դարը*, հատոր 4, Երևան, «Տիգրան Մեծ» հրատ., 2004:

⁹ Տե՛ս **Նալբանդյան Մ.**, *Երկեր*, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1985:

յան է ենթարկում «Երկու տող» տրակտատը: Սարինյանը գտնում է, որ նշվածի փիլիսոփայական մեկնությունն այն է, որ տրամաբանական ուղղվածությունն ու նպատակը նախապես որոշարկվում են ճշմարտության ու ազատության գաղափարական դրույթներով:

Ամփոփելով ասելիքը՝ Սարինյանը հստակեցնում է՝ նշելով, որ Նալբանդյանը, իր տրակտատը սկսելով Չամուռճյանի անձնաքննությամբ, փայլուն հաղթանակ է տանում և այն ավարտում Այվազովսկու ինքնավերլուծությամբ՝ ազդարարելով ապագա գաղափարամարտի նախերգանքը:

«Ռափայել Պատկանյանի գրական դավանանքը» հոդվածում Սարինյանը նկատում է, որ բանաստեղծը, գեղագիտական ըմբռնումներից ելնելով, իր կյանքի նպատակը հանգեցնում է օգտավետ քաղաքացի լինելու նշանաբանին: Ազգանվեր գործունեության համար անհրաժեշտ է ճանաչել ազգի նեկա կացությունը, պատմությունն ու հոգեբանությունը: Գամառ-Քաթիպան գաղափարի բանաստեղծ է, ով անցյալի հուշերի մեջ փորձում է բեկել ողբերգական ներկան, պախարակում է օտարամոլությունը, անձնապաշտությունը և ազատագրական պայքարի հրավեր է կարդում վասն ազգի ու հայրենյաց՝ պայքարելով իր գրչով այն ամենի դեմ, ինչ դեմընթաց է ազգանվեր գաղափարներին: Սարինյանը հոդվածն ավարտում է հետևյալ գնահատականով. «Եվ նրա համար միանգամայն բնութագրական են Հայնեի մասին ասված այն խոսքերը, թե նա «ոչ միայն գրականությունը դարձրեց իր անձնական գործը, այլև իր անձնական գործը անում էր գրականությամբ»¹⁰:

Արդիական հնչելություն ունի «Թումանյանը և հայ ժողովրդի ռուսական կողմնորոշման հարցը» հոդվածը: Նկատելով, որ ամենայն հայոց բանաստեղծի համար հայ ժողովրդի

¹⁰ Սարինյան Ս., *Սերունդներ և ախանդներ*, էջ 30:

ռուսական կողմնորոշման հարցն անձնական համակրանքի ոլորտներում լուծվող խնդիր չէր, Սարինյանը նկատում է, որ Թումանյանը, Հայաստանի ճակատագիրը դնելով Արևելքի ու Արևմուտքի հանգույցում, հայ ժողովրդի կողմնորոշման հոգեբանական սլաքը որոնում է աշխարհամասերի բախման միջակայքում: Խորհրդային երկրի մեծ ընտանիքում ապրելու միջոցին, երբ թվում էր, թե Հայաստանն ավելի երջանիկ ընթացք չի կարող ունենալ, 1978 թ. Սարինյանը ի մի է բերում Թումանյանի՝ Ռուսաստանի հանդեպ ունեցած աներկմիտ հավատը՝ ընդգծելով, որ Ռուսաստանից է կախված հայ ժողովրդին վերահաս վտանգից ազատելու առաքելությունն ու հայկական արյունոտ հարցի հայանպաստ վերջաբանը:

Գրքի երկրորդ՝ «Ժամանակի արձագանքը» բաժինը սկսվում և ավարտվում է Պարույր Սևակով, որին անդրադարձ է կատարվել նաև «Պարույր Սևակը գուգահեռի վրա» և «Պատմություն, արդիականություն, անսհատ» հոդվածների էջերում՝ գուգահեռելով Սևակի ստեղծագործությունը ժամանակակից մի շարք հեղինակների երկերի հետ ու արժևորելով նրա առանձնահատուկ գաղափարաբանությունը:

Սարինյանը գրքում հստակեցնում է նաև Վահագն Դավթյանի «Բանաստեղծության սահմանը»՝ միահյուսելով ստեղծագործական անհատականության ինքնագիտակցումը բանաստեղծի հոգու պատմության հետ: Հոդվածում ընդգծված դրսևորումները մատնացույց են անում Վ. Դավթյանի արվեստի յուրօրինակ առանձնահատկություններ, որոնք դարձել են գրականագիտական դիտարկումների նշանակետ: Բազմաշերտ վերլուծությունների արդյունքում լույս են սփռվել Դավթյանի էսսեների փիլիսոփայական ըմբռնումներում, իսկ «Կապույտ գիրքը» իր բանաստեղծական շարքերով, պոեմներով, «Ծիրանի ծառ» դրամայով և ինչպես դասական, այնպես էլ ժամանակակից այլալեզու բանաստեղծների թարգմանական բարձրարվեստ

նմուշներով, շնորհիվ Սարինյանի պայծառատես մեկնաբանությունների, դարձել է ավելի հասկանալի ու հոգեհարազատ:

Ռազմիկ Դավոյանի «Պոեզիայի ժամանակը» շոշափելի է դառնում, երբ «Տաք սալեր»¹¹ ժողովածուի շուրջ ծավալված բանավեճով ուշադրության կենտրոնում են հայտնվում աշխարհի իմացության բանաձևը նոր չափումների վրա դրած բանաստեղծի պոետական համակարգին բնորոշ մի քանի էական օրենքներ: Ռ. Դավոյանի անսահման ու զարմանահրաշ պոետական աշխարհը որպես փիլիսոփայական մենախոսություններ ընկալող գրականագետը ճուշդում է հեղինակին՝ ունկնդրելով անհատի լինելիության չհատնող առասպելը բնության գերիրական հեքիաթում ու շոայլորեն այն փոխանցում մեզ՝ հոգու ու մտքի թարգմանի իր առավելությամբ¹²:

Ս. Սարինյանը, իր գրականագիտական ճանապարհի սկզբնական շրջանից սկսած, հեղինակել է ոչ միայն հայ նոր և նորագույն գրականության պատմությանը նվիրված հոդվածներ, ծավալուն աշխատություններ, մենագրություններ, այլև գրականագիտության մեթոդաբանության ու տեսության, գրական ուղղությունների վերաբերյալ մի շարք մեծարժեք գործեր, այդ թվում նաև քննության ենթակված գրքում տեղ գտած հոդվածները՝ «Քննադատությունը գրական շարժման ուղիներում», «Պատմություն, արդիականություն, անհատ», «Քննադատությունը և գրական զարգացումը» հոդվածները: Հիշատակված առաջին հոդվածում ներկայացվում են 19-րդ դարի 70-80-ական թվականները, երբ հրամայական էր դարձել մասնագիտական գրական քննադատության անհրաժեշտությունը՝ ելնելով գեղարվեստական ձեռքբերումների համակարգման ու տեսական ընդհանրացման արդարացի պահանջներից: Իհարկե, Սարինյանը համոզված էր, որ գրականության գրագետ ու արդյունա-

¹¹ Տե՛ս **Դավոյան Ռ.**, *Տաք սալեր*, «Սովետական գրող» հրատ., Երևան, 1948:

¹² Տե՛ս **Սարինյան Ս.**, *Սերունդներ և ականդներ*, էջ 184–192:

վետ զարգացման համար անհրաժեշտ է քննադատական մտքի հզոր թևածումը՝ վկայակոչելով Ղ. Աղայանի՝ «Գրականությունն առանց կրիտիկա միևնույն է, թե ուսումնարանն առանց վերահսկող տեսուչի» արժանահիշատակ միտքը, սակայն ասվածը հստակեցնում է Րաֆֆու բանաձևումով, ըստ որի՝ քննադատն իր նյութին պետք է մոտենա այնպես, ինչպես աստվածաբանը «սուրբ գրքի մեկնությանը»՝ բացառելով կողմնակալությունն ու սուբյեկտիվ նախապաշարմունքը¹³:

Վերոհիշյալ հարցերը լուսաբանվում են նաև 91-էջանոց «Գրական նոր սերնդի դիմագիծը» հոդվածում, որն ամենածավալունն է առաջադիր գրքում: 60-ականների գրական դիմագիծը հիմնավորող հեղինակներից՝ Պ. Սևակ, Վ. Դավթյան, Հ. Սահյան, Ս. Կապուտիկյան, Ռ. Դավոյան, այս հոդվածում Սարիսյանը սահուն անցում է կատարում 70-ականների երիտասարդ սերնդին՝ համոզված լինելով, որ այդ սերունդն ունի իրեն բնորոշ դիմագիծ ու անունների շարք, «...որ միանգամայն տեսանելի է գրական շարժման պատմական անընդհատության մեջ, որպես սկիզբ և որպես շարունակություն»¹⁴: Ակնարկը, որն ըստ գրականագետի բովանդակում է հոդվածի բնույթը, ուր ավելի շատ խոսք է լինելու նյութի օբյեկտիվ մշակման մասին, քան տեսական ընդհանրացումների և դիտարկվում է որպես պատմական ուրվագիծ, քան քննական հետազոտություն, նվիրված է տասնամյակի գրական սերնդի ստեղծագործության բնութագրմանը: Քննության առարկան համապատկերի մեջ առնված գրքերի պարզ հաջորդականության վրա միտված սերնդի խոհերի ու ինքնաբացահայտման բանաստեղծական աշխարհն է: Գրականագիտական նյութի բազմաշերտ քննությունը, բովանդակային հարստության նախադրյալ հանդիսանալով, տվեց հարցի գրագետ հիմնավորում: Հրաչյա Սարուխանի

¹³ Նույն տեղում, էջ 32:

¹⁴ Նույն տեղում, էջ 271:

«Զրույց պոետի ու քննադատի միջև» անտիբալլադում արտահայտված տագնապը, թե «Թվում է՝ չկան արդեն թեմաներ և անիմաստ է ջանքը պոետի» բանաձևումը, Սարինյանին մտածել է տալիս, ու չի ուշանում իմաստավոր պատասխան փաստարկը. «...Ժամանակակից բանաստեղծը պատճառ չունի ապավինելու սովորական, հասարակ, կրկնված և ձանձրույթ հարուցող ճշմարտությունների»¹⁵: Ուրվագծելով 70-ականների պոեզիայի պատմությունը՝ Սարինյանն իրավամբ նկատում է, որ սերունդը ձևավորել է իր դիմագիծը և շատ կողմերով նախանշում է պոեզիայի զարգացման գալիք ուղիները, կասկած չի հարուցում, իսկ արձակում չնայած գրական ժառանգությունը քանակական ծավալով նկատելի քիչ է և ստեղծագործական պոտենցիայի ուժեղ պոռթկումներ չկան՝ հատկապես վեպի ժանրում, սակայն նկատելի են առաջընթացի խոստումնալի նախադրյալներ:

«Պարույր Սևակը գուգահեռի վրա» հոդվածով եզրափակվում է այս ժողովածուն, որն իր ժանրային բնութագրումներով տարբերվում է մյուսներից: Չնայած Սարինյանը փորձում է հերքել, սակայն այն իրավամբ հուշագրություն է՝ դիմանկարի ամբողջական կոլաժով, որը գրվել է 1981 թ. ապրիլ-մայիս ամիսներին: Թերևս պատմելու մեջ իրեն համետորեն վարժ չհամարող գրականագետը հոդվածի նախաբանում «արդարանում է»։ «Պարզապես Պարույրի մասին հուշագրություններն իմ մեջ արթնացրին կերպարի գուգահեռը, ուր նա ստեղծագործում էր բանավոր: Իսկ որ Պարույրն այս իմաստով մի բացառիկ հարստություն է թողել շրջապատի, ընկերների, ունկնդիրների հիշողության մեջ, կասկածից վեր է»¹⁶: Հոդված-հուշագրությունն առանձնահատուկ է իր բովանդակությամբ ու ձևով, ուր հեղինակը ներկայացրել է և մոռացության սարսափից փրկել բանա-

¹⁵ Նույն տեղում, էջ 350:

¹⁶ Նույն տեղում, էջ 362:

վոր Սևակի բազմաթիվ արժեքավոր կամ թեկուզև սովորական թվացող մտքեր ու արարքներ, որոնց միջնորդությամբ Սևակ բանաստեղծի ու անհատի կերպարն ու փիլիսոփայությունն ավելի հեշտ է պատկերացնել: Հոդվածագրի նուրբ դիտողականության ու շրջահայացությանն ենք պարտական, որ գրի են առնվել բանավոր հնչած մի շարք մտավոր ու հոգեկան պոռթկումներ, որոնք երբևիցե և ոչ մի տեղ այլևս չէին կրկնվելու: Չնայած հասկանալի է, որ հիշողությամբ «խմբագրված» բազմաթիվ արտահայտություններ, բառեր ու անգամ մտքեր նույնությամբ չեն արձանագրված, սակայն գրականագետը գտնում է, որ էականն այն է, որ ողջ պատումը Սևակի անփոխարինելի մտքերի արդյունքն է, տրամաբանական համակարգն ու խոսքի եղանակը, իսկ «...Պարույրի բանավոր զուգահեռը, ... կբացահայտվի ժամանակի ընթացքում, երբ եղելությունները պատմություն կդառնան, իսկ իր անձը՝ առասպել»¹⁷:

Ժողովածուի հայտնությունն անհրաժեշտություն էր իր տպագրության տարիներին՝ 1984-ին, արժեքավոր է նաև այսօր՝ 2024-ին: Խորհրդանշական է գրքի տարիքը՝ 40: Ամենայն հայոց բանաստեղծը կասեր. «40 տարի բռնած ճանապարհ՝/ Շիտակ, անվեհեր...»¹⁸, գնում է դեպ վեր:

Եզրակացություններ

Հեշտ չէ խոսել Սերգեյ Սարինյանի ստեղծագործական աշխարհի մասին, ներկայացնել արդեն իսկ յոթ տասնամյակ ճանապարհ անցած ու փորձություններ հաղթահարած ակադեմիական այնպիսի բնորոշումների վերաբերյալ, որոնցով շատ հաճախ բնութագրվում է հայոց երկդարյա գրականագիտական ժառանգությունը: Քննության դիտակետում հայտնված գիրքը

¹⁷ Նույն տեղում, էջ 414:

¹⁸ **Թումանյան Հ.,** *Ընտիր երկեր*, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1978, էջ 42:

ևս բացառություն չէ. այն մեկը մյուսից հետաքրքիր հոդվածների ժողովածու է, որը դասական գրականագետի առանձնահատուկ ոճի, քննաքննության, մեկնաքննությունների ու առաջադեմ գաղափարների խոստովարտահայտություն է: Գիրքն ամփոփում է հայ հասարակական մտքի, քննադատության, հրապարակախոսության, արձակի ու պոեզիայի հրամայականը ընդգծող երևույթներ, որոնք ժամանակային փուլերի ու գրական շրջանաբաժանումների սահմաններով չեն կաղապարվում: Սարինյանն այստեղ անդրադարձել է երկդարյա գրական գործընթացներին՝ սկսած Մ. Նալբանդյանից ու Ռ. Պատկանյանից մինչև Ս. Խանգաղյան, Վ. Պետրոսյան, Ռ. Դավոյան ու Պ. Սևակ՝ պատվավոր տեղում դիտարկելով նաև 70-ականների գրական նոր սերնդի դիմապատկերը:

Ժողովածուն դեռ երկար տարիներ հետաքրքրելու է գրականության գիտականին՝ դառնալով առանձնահատուկ տարեգրություն և ուղեցույց գրականագիտության դասական ավանդների փոխանցման համար, իսկ որպես ժամանակների արձագանք՝ երբեք չի խլանալու:

НАИРА ХАЧАТРЯН

*Кандидат филологических наук, доцент,
замдекан филологического факультета
АГПУ имени Х. Абовяна*

КНИГА СЕРГЕЯ САРИНЯНА «ПОКОЛЕНИЯ И ТРАДИЦИИ»

Резюме

Круг литературных интересов С. Сариняна разнообразен и всеобъемлющ, наполнен многослойными и принципиальными обоснованиями исследований. Его интересы не ограничиваются оценкой обрамленных произведений отдельных авторов, но и рас-

смаатриваются в сверхнасыщенной среде литературных экспериментов, в контексте взаимной связи произведений и их взаимовлияния. Оставаясь верным своей вере, классик создал новаторские литературные теории и собственный стиль, который невозможно спутать ни с чьим другим.

В рамках данной статьи сделано обращение к книге Сариняна «Поколения и традиции», статьи и исследования в которой являются результатом исследований автора, завершенных в начале 1980-х годов. В книге историко-критическим методом прокомментированы некоторые постановки вопросов новой и современной литературы, которые в ходе исторических изменений нуждались в новых интерпретациях, в переоценке и оценке. Наша цель – вернуться к рассмотрению этих вопросов, чтобы подчеркнуть связь литературных взглядов и интересов Сариняна со временем и в определенной среде.

Книга состоит из двух разделов: «Традиции классики» и «Отклик времени» – с заголовками, содержащими интересный подтекст. Она подводит итог явлениям, подчеркивающим императив армянской общественной мысли, критики, публицистики, прозы и поэзии, которые не шаблонируются границами временных периодов и литературных делений на периоды. В этой книге Саринян коснулся литературных процессов двух столетий, начиная с М. Налбандяна и Р. Патканяна до С. Ханзадяна, Р. Давояна и П. Севака, также отвел почетное место характерным чертам нового литературного поколения 70-х годов.

Сборник, появившийся в эпицентре критики, является красноречивым выражением отличительного стиля, критики, интерпретаций и прогрессивных идей выдающегося литературоведа. Его появление было необходимо, когда он был опубликован в 1984 году, он имеет свою ценность и сегодня, и будет интересовать ли-

тературоведов еще долгие годы, став своеобразной летописью и путеводителем для передачик классических традиций литературоведения, и не угаснет, как отголосок времени, никогда.

Ключевые слова: классик, литературовед, критический, поколение, характерные черты, литературное наследие, статья, нестареющее традиции, национальная литература.

KHACHATRYAN NAIRA

*Ph.D., associate professor,
vice dean of the Philological Faculty of the
ASPU named after Kh. Abovyan*

THE BOOK “GENERATIONS AND TRADITIONS” OF SERGEY SARINYAN

Abstract

The range of S. Sarinyan's literary interests is diverse and comprehensive, filled with multi-layered and principled substantiations of studies. His interests are not limited to evaluating framed works of individual authors; they also extend to the supersaturated environment of literary experiments, within the context of the interconnection and mutual influence of works. Remaining true to his convictions, the classic created innovative literary theories and a personal style that cannot be confused with anyone else's.

Within the framework of this article, reference is made to Sarinyan's book “Generations and Traditions”, the articles and studies included in which are the result of the author's comprehensive research conducted in the early 1980s. In the book, through historical-critical method there are construed some issues of new and contemporary literature, which required to be newly interpreted,

reestimated and evaluated during the historical changes of the period. Our goal is to return to the examination of these issues again – to emphasize the connection of Sarinyan's literary views and interests with time and in a certain environment.

The book consists of two sections – “The Traditions of the Classics” and “The Response of the Times,” with headlines containing interesting subtexts. It summarizes phenomena that highlight the imperatives of Armenian public thought, criticism, publicity, prose, and poetry, which are not shaped by the boundaries of time periods and literary period divisions. In this book, Sarinyan turned to two centuries of literary processes – from M. Nalbandyan and R. Patkanyan to S. Khanzadyan, R. Davoyan, and P. Sevak. An honorable place is also given to the distinctive features of the new literary generation of the 1970s.

The collection, which appeared at the center of critical attention, is a vivid expression of the original style, criticism, interpretations, and progressive ideas of an outstanding literary critic. Published in 1984, it was a necessity in its time, remains valuable today, and will continue to engage literary critics for years to come. As both a unique chronicle and a guide for transmitting the classical traditions of literary studies, and as a response to its era, it will never lose its relevance.

Keywords: *classic, literary critic, critical, generation, feature characteristics, literary heritage, article, timeless traditions, national literature.*